

Հավելված  
ՀՀ կառավարության 2022 թվականի  
հունիսի 30-ի N 997 - Ա որոշման

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՄԱՍՐԻԿ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈՒՆԱՅԻՆ (ՖՎ) ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Yerevan, 2022	Երևան, 2022թ.
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF ARMENIA (AS THE GOVERNMENT)	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ (ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)
AND	ԵՎ
FRV MASRIK CJSC (AS THE DEVELOPER)	«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ն (ՈՐՊԵՍ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ)
AND	ԵՎ
FOTOWATIO RENEWABLE VENTURES S.L. - FSL SOLAR S.L. (AS THE SPONSOR)	«ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ» ԷՍ.ԷԼ. - «ԷՖԵՍԷԼ ՍՈԼԱՐ» ԷՍ.ԷԼ.-ը (ՈՐՊԵՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ)
ADDITIONAL: AGREEMENT:	ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ON	
AMENDMENT AND ADDITIONS TO THE GOVERNMENT SUPPORT AGREEMENT ON DESIGN, FINANCE, BUILD, OWN AND	«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՄԱՍՐԻԿ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈՒՆԱՅԻՆ (ՖՎ)

<p><b>OPERATE MASRIK-1 SOLAR PHOTOVOLTAIC (PV) POWER PLANT AT MUNICIPALITY OF METS MASRIK IN THE GEGHARKUNIK MARZ (REGION) ARMENIA</b></p>	<p><b>ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԻՐԱԴԵՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»</b></p>
--	--

<p><b>THE AGREEMENT</b> is made in Yerevan <b>BETWEEN:</b></p>	<p><b>ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ</b> կնքվել է Երևանում</p>
<p>(1) <b>THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA, ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF ARMENIA</b> having its administrative office at Republic Square, Government House 1, 0010 Yerevan, Republic of Armenia, hereinafter referred to as the <b>"Government"</b> (which expression shall unless the context requires otherwise, include its successors and permitted assigns);</p>	<p>(1) <b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ</b> և որի վարչական նստավայրը գտնվում է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010 Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, այսուհետ՝ <b>«Կառավարություն»</b> (արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում),</p>
<p>(2) <b>FRV MASRIK CJSC,</b> a company incorporated and registered in the Republic of Armenia pursuant to Armenian law (with company number 58.120.1025778) and having its registered office at 1st Street, 12th Lane, No 2, Mets Masrik Community, 1618 Gegharkunik Marz (Region), Republic of Armenia, hereinafter referred to as the <b>"Developer"</b> (which expression shall unless the context requires otherwise, include its successors and permitted assigns); and</p>	<p>(2) <b>«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ի,</b> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գրանցված ընկերություն (գրանցման համարը՝ 58.120.1025778), որի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկի համայնք, 1618, 1-ին փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 2 հասցեն, այսուհետ՝ <b>«Կառուցապատող»</b> (արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում), և</p>

<p>(3) <b>FOTOWATIO RENEWABLE VENTURES S.L. and FSL SOLAR S.L.</b>, with its principal office at C/Mariade Molina 40, 5<sup>a</sup> Planta, 28006 Madrid, Spain, hereinafter referred to as the "<b>Sponsor</b>" (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns).</p> <p><b>NOW, IT IS AGREED AS FOLLOWS:</b></p>	<p>(3) «<b>ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱՐԼ ՎԵՆՉՐՍ</b>» <b>ԷՍ.ԷԼ. և «ԷՖԵՍԷԼ ՍՈԼԱՐ» ԷՍ. ԷԼ.</b>-ի՝ հիմնական գրասենյակի գտնվելու վայրն է՝ Իսպանիա, Մադրիդ 28006, Կայլե Մարիա դե Մոլինա 40, 5<sup>a</sup> հարկ, այսուհետ՝ «<b>Հովանավոր</b>» (արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում).</p> <p><b>ՄԻՋԵՎ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.</b></p>
<p>Article 1.</p> <p>1. To make the following changes in Amendment and Additions to the Government Support Agreement (hereinafter the "<b>Agreement</b>") on Design, Finance, Build, Own and Operate Masrik-1 Solar Photovoltaic (PV) Power Plant at Municipality of Mets Masrik in the Gegharkunik Marz (region) Armenia signed on 26.06.2020 between the Government, Developer and Sponsor (hereinafter the "<b>Parties</b>" in the Additional Agreement):</p> <p>1.1 To replace figure "0.0419" with "0.0415" in the Definitions of "Bid Tarrif" in paragraph 1.3 of Article 1 and in provision (c) of paragraph 10.2 of Article 10 of the Agreement,</p> <p>1.2 To replace words "the date that is 2 years from the Effective Date" with "September 1, 2023" in Definitions "Scheduled Commercial Operation</p>	<p><b>Հոդված 1.</b></p> <p>1. Կառավարության, Կառուցապատողի և Հովանավորի (սույն լրացուցիչ համաձայնագրում այսուհետ՝ Կողմեր) միջև 26.06.2020 թվականին կնքված Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ կառավարության աջակցության համաձայնագրում (այսուհետ՝ <b>Պայմանագիր</b>) կատարել հետևյալ փոփոխությունները.</p> <p>1.1. Պայմանագրի 1-ին հոդվածի 1.3 կետի «Մրցութային Սակագին» սահմանման և 10-րդ հոդվածի 10.2 կետի «c» պարբերության մեջ «0.0419» թիվը փոխարինել «0.0415» թվով,</p> <p>1.2 Պայմանագրի 1-ին հոդվածի 1.3 կետի «Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվ» սահմանման մեջ «Գործողության Ամսաթվից 2 տարի անց ընկնող ամսաթիվը»</p>

<p>Date” in paragraph 1.3 of Article 1 of the Agreement.</p> <p>1.3 To replace dates "01/07/22" with "01/09/23" in all paragraphs of "start" and "finish" columns of Schedule of Appendix 4 of the Agreement.</p>	<p>բառերը փոխարինել «2023 թվականի սեպտեմբերի 1-ը» բառերով:</p> <p>1.3. Պայմանագրի հավելված 4-ի ժամանակացույցի «սկիզբ» և «ավարտ» սյունակներում բոլոր կետերում «01/07/22» ամսաթվերը փոխարինել «01/09/23» ամսաթվերով:</p>
<p><b>Article 2.</b></p> <p>2. To add a new subparagraph (f) in paragraph 11.2 of Article 11 of the Agreement as follows:</p> <p>"(f) In case of additional agreement between the Parties to extend the Scheduled Commercial Operation Date, the Developer shall submit unconditional, secured, irrevocable and on-demand Additional Performance Bank Guarantee (Additional Guarantee) within 20 days after signing the Additional Agreement, to which apply all rules specified in the Format for the Performance Bank Guarantee of Article 6 of the Agreement, with the difference, that the Government reserves the right to invoke and withdraw the Additional Guarantee, in addition to other reasons, also for not ensuring the Scheduled Commercial Operation Date within the new schedule regardless any reasons, and regardless the fact of payment of lump sum penalty for extension of the COD Longstop Date pursuant to paragraph 6.2 (d) of the Agreement by the Developer. This condition is considered a mandatory condition for the Format of Appendix 6 while submission of Additional Guarantee and shall be included in the submitted Additional Agreement.</p>	<p><b>Հոդված 2.</b></p> <p>2. Պայմանագրի 11-րդ հոդվածի 11.2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ (f) ենթակետով.</p> <p>«(f). Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ երկարաձգվելու դեպքում Կառուցապատողը պետք է լրացուցիչ համաձայնագրի կնքումից հետո՝ 20 օրվա ընթացքում, տրամադրի առանց նախապայմանների, ապահովված, անհետկանչելի և ցպահանջ 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով Կատարման Բանկային Լրացուցիչ Երաշխիք (Լրացուցիչ Երաշխիք), որի վրա տարածվում են Կատարման Բանկային Երաշխիքի համար Պայմանագրով սահմանված կանոնները՝ Պայմանագրի 6-րդ Հավելվածի ձևաչափով, սակայն այն տարբերությամբ, որ Կառավարությունը իրավունք ունի Լրացուցիչ Երաշխիքը վկայակոչելու և կանխիկացնելու ի թիվս այլնի՝ նաև անկախ պատճառներից նոր ժամկետներում Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը չապահովելու դեպքում և անկախ Պայմանագրի 6.2(d) Հոդվածի համաձայն Կառուցապատողի կողմից՝ ԿՇԱ Ծայրահեղ Ամսաթիվը երկարաձգելու համար միանվագ տուգանքը վճարված լինելու հանգամանքից: Այս</p>

	<p>պայմանը համարվում է Պայմանագրի 6-րդ Հավելվածի ձևաչափի պարտադիր պայման՝ Լրացուցիչ Երաշխիքի տրամադրման ժամանակ և պետք է ներառվի տրամադրվող Լրացուցիչ Երաշխիքում:</p>
<p><b>Article 3.</b> <b>3 . Transitional Provisions</b></p> <p>3.1. In case the Developer does not submit the Additional Guarantee specified in Article 2 of the Additional Agreement acceptable for the Government within 20 days, the Additional Agreement is considered terminated the day following 20 days period without any notification by the Government, and the provisions of the main Agreement are applied to the Parties.</p> <p>3.2 This Additional Agreement is considered an integral part of the Agreement and may be signed in any number of separate copies, which together constitute one and the same Additional Agreement. The Additional Agreement is deemed executed between the Parties upon exchange of copies between all the Parties and becomes effective since that date.</p>	<p><b>Հոդված 3.</b> <b>3. Անցումային դրույթներ</b></p> <p>3.1. Սույն Լրացուցիչ Համաձայնագրի 2 Հոդվածում նշված Լրացուցիչ Երաշխիքը, որը պետք է լինի Կառավարության համար ընդունելի, սահմանված 20-օրյա ժամկետում Կառուցապատողի կողմից չտրամադրելու դեպքում Լրացուցիչ Համաձայնագիրը համարվում է լուծված 20-օրյա ժամկետին հաջորդող օրը՝ առանց Կառավարության կողմից որևէ ծանուցման իրականացման, և Կողմերի նկատմամբ կիրառվում են հիմնական Պայմանագրի դրույթները:</p> <p>3.2 Սույն Լրացուցիչ Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կարող է կնքվել ցանկացած թվով առանձին օրինակներից, որոնք բոլորը միասին կազմում են մեկ և միևնույն Լրացուցիչ Համաձայնագիրը: Սույն Լրացուցիչ Համաձայնագիրը համարվում է կնքված Կողմերի միջև՝ բոլոր Կողմերի կողմից ստորագրված օրինակներ բոլոր Կողմերի միջև փոխանակվելուն պես, և այդ պահին էլ մտնում է ուժի մեջ:</p>
<p>This Additional Agreement is executed in the Armenian and English. The Parties accept that all negotiations of the Agreement were made in English and agree that in case of any inconsistency</p>	<p>Սույն Լրացուցիչ Համաձայնագիրը կազմված է հայերեն և անգլերեն: Կողմերն ընդունում են, որ սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցությունները Կողմերի միջև անցկացվել են անգլերեն, և համաձայնում են, որ սույն</p>

<p>between Armenian and English versions of the Agreement, the English version prevails.</p>	<p>Պայմանագրի հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում, գերակայում է անգլերեն տարբերակը</p>
<p>IN WITNESS WHEREOF.</p>	<p>Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ</p>
<p>The Parties intended to be legally bound, have duly signed this Additional Agreement through their authorized representatives on the dates set by signatures below:</p>	<p>Կողմերը, մտադրված լինելով իրավաբանորեն պարտավորվել, պատշաճ կերպով ստորագրեցին սույն Լրացուցիչ Համաձայնագրի իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով՝ ստորև դրված ստորագրությունների կողքին նշված ամսաթվերին.</p>

**SIGNED** by the **GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA** (acting on behalf of the **REPUBLIC OF ARMENIA**)

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ** (որը գործում է **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** անունից)

By: Gnel Sanosyan, Minister of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia, as its authorised representative

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ

Signature:  
Ստորագրություն.

Date:  
Ամսաթիվ՝

**SIGNED by FRV MASRIKCJSC**

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-Ի  
ԿՈՂՄԻՑ**

By:

as its authorised representative

Signature:

Ստորագրություն՝

Կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ

Date:

Ամսաթիվ՝

**SIGNED by  
FOTOWATIO RENEWABLE VENTURES  
S.L.**

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է «ՖՈՏՈՎԱՏԻՈ  
ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ» ԷՍ.ԷԼ.-Ի  
ԿՈՂՄԻՑ**

By:

as its authorised representative

Signature:  
Ստորագրություն.

Կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ  
Date:  
Ամսաթիվ՝

**SIGNED by  
FSL SOLAR S.L.**

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է «ԷՖԷՍԷԼ ՍՈԼԱՐ»  
ԷՍ. ԷԼ.-Ի ԿՈՂՄԻՑ**

By:

as its authorised representative

Signature:  
Ստորագրություն.

Կողմից՝ որպես լիազորված ներկայացուցիչ  
Date:  
Ամսաթիվ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**